"ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ Մետաղական հաշիվների ծառայության մատուցման պայմանները.

1. Մետաղական հաշիվները բացվում են Բանկի Հաճախորդների՝ ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար:
2. Մետաղական հաշիվները բացվում են 999.9 հարգի ոսկով:
3. Մետաղական հաշիվներով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝

*Մետաղական հաշվի համալրում՝ Բանկից անկանխիկ ոսկի գնելու և այն մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով.

*Մետաղական հաշվի համալրում՝ հաճախորդի կամ այլ անձի նույն Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով.

*Մետաղական հաշվի ելքագրում՝ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով.

*Մետաղական հաշվի ելքագրում՝ Հաճախորդի կամ այլ անձի նույն Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:

4. Մետաղական հաշիվներով չեն կարող իրականացվել 3-րդ կետով սահմանված գործառնություններից բացի այլ գործառնություններ, այդ թվում՝ մետաղական հաշվի վարկավորում, ինչպես նաև մետաղական հաշիվների համալրում կամ ելքագրում ոչ դրամական միջոցներով, բացառությամբ միջբանկային փոխանցումների, որոնց դեպքում անկանխիկ ոսկով թղթակցային հաշիվների համալրումը կամ ելքագրումը կարող է իրականացվել համապատասխան հարգի բանկային ոսկու կամ ոսկու ստանդարտացված ձուլակտորների միջոցով:
5. Մետաղական հաշիվները կարող են գրավադրվել:
6. Մետաղական հաշվից օգտվելու նպատակով Հաճախորդների համար ՀՀ դրամով Բանկային հաշվի առկայությունը պարտադիր է:
7. Մետաղական հաշիվներով իրականացվող գործառնությունների դիմաց գանձվում է միջնորդավճար՝ Բանկի սակագներով սահմանված չափով:
8. Մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է ՀՀ դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ոսկու համար հայտարարած հաշվարկային գնով և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ:
9. Բանկի կողմից սահմանվում են 1 գրամ անկանխիկ ոսկու առքի և վաճառքի փոխարժեքներ, որոնք հիմք են ընդունվում հաշվով իրականացվող գործարքներն իրականացնելիս:
***10. Առարկայագուրկ մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:***